Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 7-ի N 94 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԹՈՒՄՈ» ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Տավուշի մարզի Կողբ համայնքում Թումո ստեղծարար տեխնոլոգիա-ների կենտրոն, ուսումնական ծրագիր իրականացնելու նպատակով շենքային պայմանների ստեղծումը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ծրագիրն իրականացվելու է Ֆի Էյչ Էմ բարեգործական հիմնադրամի կողմից՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցով (240,000,000 երկու հարյուր քառասուն միլիոն դրամ), Կողբ հիմնադրամի կողմից (144,000,000 մեկ հարյուր քառասունչորս միլիոն դրամ) և այլ բարերարների կողմից (653 000 000 վեց հարյուր հիսուներեք միլիոն դրամ) հատկացված և հատկացվելիք նվիրաբերությունների հաշվին:
4.	Ծրագիրը կատարողը	«Սիմոնյան» կրթական հիմնադրամ (ք. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Տավուշի մարզի Կողբ համայնքի 1-ին փողոցի 35/1 հասցում, քաղաքաշինության ոլորտում:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 1,037,000,000 (մեկ միլիարդ երեսունյոթ միլիոն) դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուն են՝ Կողբի և հարակից բնակավայրերի համայնքները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրն իրականացվելու է մեկ փուլով՝ 2016 թ.-ի սեպտեմբերի 27-ից մինչև 2020 թ.-ի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները. • Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական և այլ նմանատիպ աշխատանքների իրականացում և աշխատանքային նախագծերի համաձայնեցում, թողարկում և հաստատում՝ 73,000,000 (յոթանասուներեք միլիոն) դրամ, 27.09.2016 թ.-ից մինչև 30.06.2018 թ.-ը (մինչև 2017 թ.-ի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կնքվել է 71 205 000 դրամի

		գործարք), • Շինարարական և բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 934, 000,000 (ինը հարյուր երեսունչորս միլիոն) դրամ, 01.03.2017թ.-ից մինչև 30.09.2020 թ.-ը (մինչև 2018 թ.-ի դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կնքվել է 674 818 531 դրամի գործարք), • Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների իրականացում՝ 18 000 000 (տասնութ միլիոն) դրամ, 01.03.2017 թ.-ից մինչև 31.12.2020 թ.-ը, • Վարչական ծախսեր՝12,000,000 (տասներկու միլիոն) դրամ, 27.09.2016 թ.-ից մինչև 30.09.2018 թ.-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	• Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում ՀՀ-ից՝ 10,000,000 (տասը միլիոն) դրամ, 27.09.2016 թ.-ից մինչև 30.06.2020 թ.-ը, • Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում արտերկրից՝ 63 000 000 (վաթսուներեք միլիոն) դրամ, 27.09.2016 թ.-ից մինչև 30.06.2020 թ.-ը, • Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռքբերում ՀՀ-ից՝ 682,000,000 (վեց հարյուր ութսուներկու միլիոն) դրամ, 01.03.2017 թ.-ից մինչև 30.09.2020 թ.-ը, • Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռքբերում արտերկրից՝ 252,000,000 (երկու հարյուր հիսուներկու միլիոն) դրամ, 01.03.2017 թ.-ից մինչև 30.09.2020 թ.-ը, • Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների ձեռքբերում ՀՀ-ից՝ 12,000,000 (տասներկու միլիոն) դրամ, 01.03.2017 թ.-ից մինչև 31.12.2020 թ.-ը, • Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում արտերկրից՝ 6,000,000 (վեց միլիոն) դրամ, 01.03.2017 թ.-ից մինչև 30.09.2020 թ.-ը:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	• Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ՝ 8,000,000 (ութ միլիոն) դրամ, 01.10.2016 թ.-ից մինչև 30.09.2020 թ.-ը, • Գործուղման ծախսեր՝ 3,000,000 (երեք միլիոն) դրամ, 01.10.2016 թ.-ից մինչև 30.09.2020 թ.-ը, • Գրասենյակային և այլ ծախսեր՝ 1,000,000 (մեկ միլիոն) դրամ, 01.10.2016 թ.-ից մինչև 30.09.2020 թ.-ը:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Կողբի համայնքապետարանի և ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական տեսչության հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ